

Տ. ԴԱՎԻԹ ԱԲԵՂԱ ՔԱՐԱՄՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(29 դեկտեմբերի 2002 թ.)

*«Տեր, զքե՛ն գոհասա՛մ հաճապագ, որ զանց արարե՛ր
զի՛նով անարժանութեանքս, այսպիսի ահաւոր եւ
անպարտում խորհրդոյ կարգեցե՛ր սպասաւորս,
ոչ յաղագս իմոյ ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ
թափուր եմ, այլ ի քո բազմազեղ ներողութիւնդ ցանգ
սպասիմեալ՝ համարձակիմ կալ ի սպասաւորութիւն քո»:
(Խորհրդարարութիւն)*

Տիրավի, անչափ է ողորմությունդ, Տեր... Անհաղորդ էի Քո խոսքին, սակայն ծագեցրիր հոգսս մեջ աստվածգիտությանդ լույսը, պարտութեցիր էությունս Քո ջերմ սիրով ու կոչեցիր՝ Խոսքիդ սպասավորը լինելու: Վարանցի մի պահ աստվածությանդ կանչին ի պարասխան: Թույլ էին ուսերս, Տեր, կենարար Խաչդ կրելու համար, սակայն հայրնվեցիր ժպտուն երեսով, ու կարծես շուրթերիդ կարդացի երբեմն Պետրոսին ասված խոսքը.

Միրեն՝ զիս:

Այո՛, Տեր, սիրեմ եւ գիտես զի սիրեմ զՔեզ (Հմմտ. Հովհ. ԻԱ 15):

Այս հավաստմով ծնկի եկա խորանիդ առջև և սիրո ուխտս կնքեցի Քեզ հետ: Դու ինձ հովիվ կարգեցիր Քո հոտին, իսկ ես խոստացա անձս դնել նրա համար...

Ու հիմա, դարձյալ կանգնած ուխտի նույն խորանին, մրաժու՛մ եմ, թե՛

«Ջի՛նչ քաց տրիպուր Տեառն, ընդ ամենայնի զոր եւ եր ինձ»:

«Ի՛նչ հաբուցում պիտի անեմ Տիրոջն այն ամենի համար, որ ինձ տվեց»:

(Մաղմոս ԸԺԴ 12)

Միրելի հավաքացյալներ, այս ապրումն է, որ այսօր, որպես երախայրիքն իմ խոսքի, կամենում եմ ձեզ փոխանցել: Քարոզ չէ, որ խոսում եմ, այլ հոգեբույս ցանկությունս է, որ քարեվերջյան այս կիրակին դարձնենք խորհրդածության և Աստծո հետ անկեղծ զրույցի մի առիթ:

Այս փարին ևս դառնում է պարմություն՝ քանելով իր հետ մեր կյանքի բազում պահեր՝ և՛ ուրախություն, և՛ տխրություն, կարո՞ւր երազանք, և՛ մանկան ծիծաղ, և՛ մոր լաց, որ անցյալ են դառնում...

Եվ կանգնած գալիքի շեմին՝ սպասում ենք... Սպասում ենք, որ ուրախությունը բազմապարկվի, որ տխրությունը խնդության վերածվի, թափառական կարո՞ւր իր խաղաղ օթեվանը գտնի, որ երազանքն իրականություն դառնա, մանկան քրքիջը հարաւրեի, ու մոր լացը երջանկության արտասուքի վերափոխվի:

Այսպիսին է մարդկային կյանքը՝ անվերջ սպասում...

Սակայն, սթափվիր, ով մարդ: Դու, որ մոլորվել ես կյանքի փարերքում, մի պահ վեր բարձրացիր ժամանակից, մոռացիր ինքդ քեզ ու լուռ խորհիր, թե ինչ ես հափուցել Տիրոջն այն ամենի համար, որ Նա է քեզ տվել: Թերևս մտածել ես, թե Աստված քո հափուցման կարիքը չունի, կամ էլ այնքան ես մխրճվել աշխարհային հոգսերի մեջ, որ նույնիսկ Աստվածուն էլ ես մոռացել: Կշտամբա՞նք չեն այս խոսքերը, այլ անկեղծ մի հորդոր, որ Աստված այս սուրբ բնակարանում այսօր քո աղոթքն ուրիշ բառերով սկսես: Գեթ այս անգամ պես-պես խնդրվածքներ չներկայացնես, այլ սիրալիկ շշջաս: «Ի՛նչ ես կամենում, Տեր իմ Աստված, որ Զեզ ընծայեմ ամանորի այս շեմին: Կա՛ մի բան, որ առավել ես սիրում...»:

Ու պիտի լսես մի ձայն, փարբեր բոլոր ձայներից. Աստված պիտի խոսի քեզ հետ: «Սիրելիս, մենությունս փարափելու եկար: Ընծա չէ, որ քեզանից ակնկալում եմ, այլ անկեղծ մի պարասխան: «Ուրախ կլինեմ, երբ հարազատ գավակդ մոռանար ու լքեր քեզ, երբ գավակներդ իրենք միմյանց հանդեպ անտարբերությամբ ու թշնամանքով լցվեին: Գիտեմ, որ ամենադժբախտը կլինեիր...»

Ես՝ քո Տեր Աստվածն եմ, այդ վշտացյալ ծնողը: Ես սրեղծեցի ու փայփայեցի քեզ, սակայն դու չհիշեցիր ինձ, քեզ եղբայրներ ու քույրեր տվեցի, բայց դու արեցիր նրանց...

Ընծա՛ ես կամենում րալ: Տուր ինձ սրբիդ խորքում մի անկյուն, որ քեզ մոտ ինձ օտար չգգամ, որ ինձ դիմելիս հայացքդ անորոշ երկինք չհառես, այլ քո սրտում ինձ հանդիպես: Եվ երբ անտարբեր անցնես մարդկանց ցավերի կողքով, սիրտդ մեղմ բաբախի, և դու հասկանաս, որ քեզ հառված աչքերը սեր են աղերսում...»:

Այս խոհերով ու ապրումներով Զեզ եմ դիմում, Վեհափառ Տեր.

- Ի՛նչ հափուցում պետք է անեմ Զեզ այն ամենի համար, որ ինձ եք շնորհել, շնորհակալական երկրորդ արտասանեմ, թե՛ պես-պես խոստումներ տամ: Անկարող եմ բառերի վերածել սիրտս... Զեր խոնարհ ու երախտագետ որդին եմ:

- Համբա՞ց եմ նաև Զեր առջև, Սրբազան Հայր, որ փարիներ առաջ ուղղություն տվեցիք վարանոտ քայլերիս ու բացեցիք իմ առջև Հայոց Եկեղեցու հնաբույր դուռը, իսկ 40 օրեր առաջ շնորհներով պսակեցիք ինձ այդ նույն դռնից ներս:

Սրբիս մեջ ձեր կնիքն է, ո՛վ Վազգենյան և Գևորգյան անմար կանթեղներ:

Հոգուս մեջ գիտության կրակը վառեցիք, լույսի սպասավորներ...

Միրո ու անսահման նվիրումի մարմնացում դարձած անձս յուրաքանչյուրիդ շուրթերով այս պահին աղոթք է մրմնջում.

Մեր անուն Ցիսուս

Միրով Զով ճմլես

Միրո իմ քարեղէն. Ամեն:

(«Առաւօր լուսոյ»)